

ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ԳԻՏՆԱԿԱՆԸ

(Լ. Ա. Հովհաննիսյանի ծննդյան 70-ամյակի տոբիվ)

Լրացավ ՍՍՌԻ Բժշկական գիտությունների ակադեմիայի և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Լ. Ա. Հովհաննիսյանի ծննդյան 70-ամյակը և գիտական-բժշկական գործունեության 45-ամյակը:

Լեոն Անդրեասի Հովհաննիսյանը ծնվել է 1885 թվականին Թիֆլիսում: Նա իր բժշկական կրթությունն ստացել է Խարկովի համալսարանում, ապա աշխատել է Թիֆլիսում և Ալավերդում, առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ՝ գործող բանակում: Այդ շրջանում արդեն, նա պրակտիկ բժշկական գործունեությունը համատեղում է գիտական հետազոտությունների հետ:

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու առաջին իսկ օրերից Լ. Ա. Հովհաննիսյանը իր ամբողջ ուժերն ու գիտելիքները նվիրում է ժողովրդի առողջապահության և բժշկական գիտության զարգացման գործին: Մի շարք աշխատակիցների հետ միասին նա բազմակողմանի կերպով և խորապես ուսումնասիրել է մալարիա հիվանդության կլինիկական ձևերն ու նրա բուժման միջոցառումները, հրատարակել է շուրջ 50 գիտահետազոտական աշխատություն, որտեղ տրվում է ո՛չ միայն մալարիայի կլինիկական ձևերի նոր դասակարգումը, այլև նրա բուժման նոր միջոցառումները:

Լ. Ա. Հովհաննիսյանը նշանակալի գործ է կատարել Հայաստանի կուրորտային հարստությունների ուսումնասիրության ասպարեզում: Նրա հետազոտության արդյունքները վճռական նշանակություն են ունեցել Արզնի կուրորտի հիմնադրման գործում: Հայաստանի կուրորտային հարստությունների հետազոտության ուղղությամբ Լ. Ա. Հովհաննիսյանի կատարած աշխատանքների մի մասը ամփոփված է նրա «Հայաստանի հանքային աղբյուրները» վերնագրերը կրող մենագրության մեջ:

Լ. Ա. Հովհաննիսյանն իր գիտական հետազոտությունները զարգացրել է նաև սիրտ-անոթային հիվանդությունների ուսումնասիրության ուղղությամբ: Այդ բնագավառում նրա կատարած ուսումնասիրություններն ունեն կլինիկական և էքսպերիմենտալ բնույթ: Նա իր էքսպերիմենտալ աշխատանքներով բացահայտել է սրտի օրգանական աղմուկների ծագման մի շարք հարցերը: Սրտի հիվանդությունների կլինիկայի և բուժման ուղղությամբ Լ. Ա. Հովհաննիսյանի կատարած աշխատանքները լուսաբանում են վերոհիշյալ պրոբլեմի կարևոր կողմերը Ի. Պ. Պավլովի ուսմունքի լուսսի տակ: Այժմ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Բժշկության սեկտորը պրոֆեսոր Լ. Հովհաննիսյանի ղեկավարությամբ շարունակում է ուսումնասիրել կարդիոլոգիայի պրոբլեմները:

Լ. Ա. Հովհաննիսյանը հեղինակ է մի շարք դասագրքերի, ինչպես, օրինակ՝ «Ներքին հիվանդությունների կլինիկայի ներածություն», «Ներքին հիվանդությունների դիագնոստիկա», «Հիվանդի կլինիկական հետազոտության մեթոդիկա», «Ներքին հիվանդությունների կլինիկա», «Մալարիայի կլինիկան» և այլն:

Լ. Ա. Հովհաննիսյանը մեծ ծառայություններ ունի նաև հայ բժշկության պատմության ուսումնասիրության ասպարեզում: Նրա գրչին է պատկանում «Բժշկության պատմությունը Հայաստանում» վերնագրերը կրող հինգ սովոր հատորներից բաղկացած աշխատությունը: Այս աշխատությունն իր մեջ ամփոփում է բժշկության պատմությունը Հայաստանում և հայերի մոտ՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:

1944 թվականին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայում Լ. Ա. Հովհաննիսյանի նախաձեռնությամբ հիմնվում է Հայ բժշկության և բիոլոգիայի պատմության ուսումնասիրության հանձնաժողով, որը շուտով վեր է ածվում Հայ բժշկության և բիոլոգիայի պատմության սեկտորի:

Լ. Ա. Հովհաննիսյանը մեծ աշխատանք է կատարել նաև հայ բժշկական տերմինաբանության զարգացման ու հարստացման գործում: Այդ ուղղությամբ նրա կատարած մի շարք գործերից նշենք Մ. Աբեղյանի և Ա. Տեր-Պողոսյանի հետ կազմած Լատին-ուսու-հայերեն բժշկ.

կական տերմինների բառարանը, որը հրատարակվել է 1951 թվականին Այժմ Լ. Ա. Հովհաննիսյանը հրատարակության է պատրաստում Ռուս-լատին-հայերեն բժշկական տերմինների բառարանը:

Մեծ է Լ. Ա. Հովհաննիսյանի դերը բժշկական-գիտական կադրերի պատրաստման գործում: Իր եռուն և բեղմնավոր գիտական գործունեության երկար տարիների ընթացքում նա ղեկավարելով Նրեանի բժշկական ինստիտուտի ներքին հիվանդությունների դիագնոստիկայի ամբիոնը, ներքին հիվանդությունների կլինիկան, Մայարիայի և բժշկական պարագիտությունների ինստիտուտի կլինիկական բաժանմունքում և Արզնի կուրորտում աշխատող երիտասարդ կադրերի աշխատանքը, պատրաստել է բազմաթիվ որակյալ ու փորձված մասնագետներ: Լ. Ա. Հովհաննիսյանը ակտիվ հասարակական գործիչ է, խաղաղության մեծ գործի համար եռանդուն պայքարող:

Սովետական կառավարությունը, բարձր գնահատելով պրոֆ. Լ. Ա. Հովհաննիսյանի ծառայությունները, պարգևատրել է նրան շքանշաններով և մեդալներով:

Լ. Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, բժշկական գիտ. քեկեաժու